ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ՍՎԱՋՅԱՆ

ՀԱՅ-ԱՂՎԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Զ. ԴԱՐՈՒՄ

451 թ. Քաղկեդոնում գումարված եկեղեցական մեծ ժողովում քննության դրված կրոնական հարցը Քրիստոսի երկու (աստվածային ու մարդկային) թե մեկ (աստվածային) բնություն ունենալու շուրջ, կայսր Մարկիանոսի (450-457) եւ պապ Լեւոն Առաջինի ճնշման տակ լուծվում է հօգուտ առաջին տեսակետի[1]: Ժողովի որոշումը, որ հիմնված էր «Տոմար Լեւոնի» անունով հայտնի գրության վրա, ողջ քրիստոնեական աշխարհը բաժանում է երկու մասի՝ որոշման կողմնակիցների՝ քաղկեդոնականների կամ երկաբնակների ու հակառակորդների՝ հակաքաղկեդոնականների կամ միաբնակների, որոնց միջեւ հենց սկզբից անգիջում դավանաբանական պայքար է ծավալվում, որ տեւական ժամանակ զբաղեցնում է Արեւելքի ժողովուրդների հասարակական միտքը:

Արտաքուստ կրոնական թվացող այս խնդիրը, սակայն, հետապնդում էր քաղաքական նպատակ: Բյուզանդիային ձեռնտու որոշմանը հարողները դառնում էին կայսրության հպատակներ նաեւ գաղափարապես եւ վերածվում նրան հնազանդ կամակատարների, իսկ ընդդիմադիրները՝ ներունակ հակառակորդների:

Քաղկեդոնականությունն արագ տարածում է գտնում: Շուտով նրա գաղափարախոսները հայտնվում են Հայաստանում ու իրենց քարոզներով սպառնում Հայոց Եկեղեցու միաբանությանը: Նրանք թափանցում են նաեւ Աղվանք ու վտանգի տակ դնում Աղվանից Եկեղեցու դավանական միասնությունը: Դրանից անհանգստացած՝ տեղի հոգեւոր հայրերը ժամանակի այդ չարիքի դեմն առնելու համար միջոցներ են ձեռնարկում՝ հայոց հետ հույսեր կապելով:

Հայերը եւ, պետք է կարծել ն ում, նույնպես իղձի ազատության համար, մի այլ կռիվ էին մղում Սասանյան Իրանի դեմ, իսկ վերջիններս զբաղված էին երկիր ներխուժած պարսից բանակից ու նրանց միացած հոնաց պատերազմից վերադարձած տասը հազարանոց զորագնդից իրենց աշխարհը հայերի օգնությամբ պաշտպանելու զոր-

1 Տե՛ս **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Ա., Երեւան, 2007, էջ 567-573 (այսուհետ՝ Օրմանեան):

ծով[2]: Ժամանակներ անց, երբ քաղկեդոնականությունը լայն տարածում է գտնում հայերի /հատկապես Բյուզանդական Հայաստանում բնակվողների/ ու հարեւան աղվանացիների եւ վրացիների շրջանում, տարածաշրջանի եկեղեցական գործիչներն անդրադառնում են Քաղկեդոնի ժողովին ու նրա որոշումներին եւ վճռական գործողությունների դիմում: 506 թ. Հայոց Բաբկեն Ա. Ոթմսեցի (Վանանդ գավառ) Կաթողիկոսի (490-516 թթ.) նախաձեռնությամբ Դվին մայրաքաղաքում, Ս. Գրիգորի անունը կրող եկեղեցում, ժողով է գումարվում[3], ուր քննարկվում է դավանաբանական բուռն վեճեր հարուցած վերոհիշյալ հարցը: Հայոց Եկեղեցին վերջինիս քննությամբ հանդես է գալիս՝ իր տրամադրության տակ ունենալով Ալեքսանդրիայի պատրիարք Տիմոթեոս Կուզի դավանաբանական բնույթի երկերը եւ, հատկապես, նրա՝ քաղկեդոնականության դեմ ուղղված «Հակաճառություն» գործը[4] իր որոշումներում հենվելով նրանում արծարծված սահմանումների վրա: Ժողովին մասնակցում էին եպիսկոպոսներ Հայաստանի գրեթե բոլոր՝ 30[5], եպիսկոպոսական թեմերից, նրանց պաշտոնակիցներ Աղվանքից ու Վիրքից, նախարարներ, աշխարհիկ այլ տերեր[6] եւ պարսիկ ու ասորի պատգամավորներ:

Ժողովին աղվանացիների ու վրացիների մասնակցության մասին վկայում է Հայոց Աբրահամ Ա. Աղբաթանեցի Կաթողիկոսը (607-613 թթ.): Վրաստանի իր աթոռակից Կյուրիոնին ուղղված նամակներից երրորդում: Մեղադրելով նրան քաղկեդոնականություն ընդունելու եւ իր նախնիների հավատից շեղվելու մեջ, ապա եւ անուն առ անուն թվարկելով ժողովին մասնակից վրացի եպիսկոպոսներին, Հայոց Հայրապետը գրում է. «Այս երանելի եպիսկոպոսունքս, որ յաշխարհէ ձերմէ (այսինքն Վիրքից- **Հ. Ս.**) եւ ընդ Աղուանիք եւ ընդ Սիւնիք ի Հայս դիպեցան յաւուրս Բաբգենայ Հայոց Կաթողիկոսի յայն ժողովի յորում անիծաւն ի նոցանէն միաբանութեամբ ժողովն Քաղկեդոնի եւ զումարն Լեւոնի»[7]: Այսպես, հաստատագրվում է աղվանացիների մասնակցությունը ժողովին, սակայն, անհայտ է մնում Դվին ժամանածների թե՞ անուններն ու թվաքանակը եւ թե այն եպիսկոպոսությունները, որոնք ներկայացնում էին նրանք: Կարծիք կա, որ նրանց հետ Դվին էին ժամանել եպիսկոպոսներ նաեւ Ուտիքից ու Արցախից, որոնք այդ ժամանակ գտնվում էին Աղվանից մարզպանության կազմում[8]: Որ դա առավել քան հավանական է, ցույց են տալիս այլ առիթներով Աղվանից եպիսկոպոսների ու եպիսկոպոսությունների անվանական հիշատակությունները, որոնց շարքում նշվում են նաեւ հիշյալ հայկական նահանգների եպիսկոպոսական թեմերի ու սրանց աթո-

2 Տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից աշխարհի պատմություն /հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ/, Երեւան, 2006, էջ 191-194:

3 Տե՛ս **Օրմանեան**, էջ 581 եւ հաջ., **Ե. Տեր-Մինասյան**, Բաբգեն Կաթողիկոսի ժողովի թվականը եւ տեղը, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երեւան, 1971, էջ 31-44:

4 Տե՛ս **Ն. Ակինյան**, Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ,Վիեննա, 1909, **Վ. Մ. Վարդանյան**, Հայոց Եկեղեցին վաղ միջնադարի քաղաքական խաչուղիներում. Վաղարշապատ, 2005, էջ 242-245:

5 Տե՛ս **Ուիտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, հատուած առաջին, Վաղարշապատ, 1871, էջ 100:

6 Ժողովին մասնակից հայ եպիսկոպոսների ու նախարարների անվանց թվարկումը տե՛ս Օրմանեան, էջ 581-582:

7 «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 183

8 **Մ. Բալայան,** Հայ-Աղվանից եկեղեցին /սկզբնավորումից մինչեւ մեր օրերը/, Սրբեփանակերտ, 2009, էջ 38:

ռակալների անունները[9]: Ուստի, առանց երկմտանքի կարելի է ընդունել այդ փաստը եւ վստահորեն ասել, որ աղվանացիների պատվիրակության կազմում եղել են նաեւ Արցախի ու Ուտիքի ներկայացուցիչները եւ մյուս ժողովականների հետ միասին միահամուռ նզովել Քաղկեդոնի ժողովի որոշումներն ու Լեւոնի տոմարը:

Դվինի այս առաջին ժողովի որոշումները չեն մնում Ս. Գրիգոր եկեղեցու անձուկ պատերի ներսում, պարսիկ պատգամավորների առաջարկով պատրաստվում է Պարսկաստանի քրիստոնյաներին ուղղված մի նամակ՝ «Թուղթ Հայոց, ի Պարսս առ ուղղափառս»[10], որով վերջիններիս տեղյակ էր պահվում ընդունված կանոնակարգին ու այլադավանության դեմ պայքարին հավատարիմ մնալու իրենց որոշման մասին: Թուղթը կամ, այսպես կոչված «Հաւատոյ նամակը», որը դիտվում է իբրեւ Բաբկեն Կաթողիկոսի «Առաջին թուղթ», ստորագրում ու իրենց կնիքներով վավերացնում են Բաբկեն Հայոց Կաթողիկոսը եւ «ամենայն եպիսկոպոսունք եւ Վարդ Մամիկոնեան»: Վերջինս եղբոր՝ Վահան Մամիկոնյանի մահից հետո ստանձնել էր Հայոց մարզպանի պաշտոնը: Թուղթը ինչ-ինչ պատճառներով երկրորդվում է եւ իր հետ նոր մանրմասնություններ բերում: Դրանցից պարզվում է, որ նամակը կազմելիս այն համաձայնեցվել է աղվանացիների (ու վրացիների) հետ: «Գրեցաք իսկ (դավանաբանական վեճերում իրենց ունեցած դիրքորոշման մասին-Հ.Ս.), ձեզ յառաջագոյն Վրաց եւ Աղուանից միաբանութեամբ իւրաքանչիւր, աշխարհի գրով: Եւ այժմ երկրորդեցաք...»[11]: Ելնելով այս վկայությունից, գտնում ենք, որ աղվանացիները եւս հայերի ու վրացիների հետ միասին իրենց ստորագրություններն են դրել Թղթի տակ, ինչը խոսում է ժողովում նրանց ունեցած լուրջ դերակատարության օգտին: Կա տեսակետ, թե «Հավատո նամակը» կազմվել է երեք օրինակից՝ «իւրաքանչիւր աշխարհի գրով», այսինքն հայերեն, աղվաներեն ու վրացերեն եւ ստորագրվել հայերի, աղվանացիների ու վրացիների կողմից առանձին-առանձին[12]: Նամակի աղվաներեն եւ վրացերեն տարբերակների գոյությունը եւ, մասնավորապես, աղվաներենով Պարսկաստանի ուղղափառներին ուղարկված լինելուն հակված է հավատալու եւ Ա. Հակոբյանը[13]: Սակայն նման տեսակետը մեզ համոզիչ չի թվում: Նամակը ժողովում բոլորի կողմից ընդունված որոշումների պաշտոնական վավերագիրն էր եւ արտահայտում էր ժողովականների կամքը: Ուստի, բավական էին նաեւ նրա տակ դրված ստորագրությունները եւ տվյալ պարագայում հազիվ թե զգացվեր մասնակից երկրների կողմից եւս առանձին-առանձին նույն բովանդակությամբ գրություններ ուղարկելու անհրաժեշտություն: Պետք է հաշվի առնել նաեւ այն իրողությունը, որ նամակն ուղարկվում էր Պարսկաստանի բոլոր ուղղափառներին՝ «առ ազատս, եւ առ գեղջաւագս, առ մեծամեծս եւ առ փոքունս եւ առ ամենայն

9 Տե՛ս ստորեւ:

10 «Գիրք Թղթոց», էջ 47:

11 Անդ, էջ 51:

12 **Օրմանեան,** էջ 587. **Ե. Տեր-Մինասյան**, Բաբգէն Կաթողիկոսի ժողովի թվականը..., էջ 43. **Մ. Բալայան,** Հայ-Աղվանից եկեղեցին, էջ 38:

13 **А. А. Акопян**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван, 1987, էջ 128-129, էջ 128, ծանոթ. 22, էջ 136:

հաւատացեալս Պարսից աշխարհի»[14], որոնց համար, գրամաբանական է կարծել, աղվաներենը անծանոթ լեզու էր եւ նրանով գրված նամակը կդառնար անեպատակ ու միանգամայն ավելորդ: «Յուրաքանչիւր աշխարհի գրով» կապակցությանը, որ գայթակղության քար է դարձել նաեւ աղվանական գրի գոյության շուրջ բանավիճող գիտնականների համար[15], իր մեկնաբանությունն է տվել պատմաբան-բանասեր Ա. Շ. Մնացականյանը: Նրա կարծիքով՝ նամակի հեղինակներն այն կազմելիս նկատի են ունեցել Պարսկաստանին ենթակա տարբեր երկրներում (Ասորեստան, Խուժաստան, Վերթ եւ այլն) ապրող քրիստոնյաներին եւ նամակը, որ ուղարկվելու էր նրանց, գրել կամ թարգմանել են նրանցից յուրաքանչյուրի աշխարհի գրով[16]: Մի կողմ թողնելով այս կարծիքի վիճելի կողմերը՝ ասենք միայն, որ սրանով գիտնականը փաստորեն բացառում է աղվաներենով գրված որեւէ թղթի գոյությունը: Ի վերջո, կա մատենագիտական հստակ տվյալ, որի համաձայն Պարսկաստան ուղարկված նամակը գրվել է «հայերեն եւ պարսկերեն»[17]: Այսպիսով՝ նշված փաստարկները հիմք չեն թողնում կարծելու, թե եղել են այլ լեզուներով եւս գրված նամակներ: Դրանք գրվել են թե՛ Հայաստանում եւ թե Պարսկաստանում ապրողների համար հասկանալի հայերենով ու պարսկերենով, որն էլ վկայված է փաստաթղթում: Ի դեպ, այս հանգամանքը տրամաբանորեն հուշում է նաեւ, որ վերջիններս էլ հանդիսացել են ժողովի աշխատանքային լեզուները:

Նգովելով Քաղկեդոնի ժողովի որոշումներն ու «Լեւոնի տոմարը» եւ ընդունելով Քրիստոսի միայն մեկ՝ ասպվածային բնույթ ունենալու տեսակետը, Հայոց Եկեղեցին հարում է հակաքաղկեդոնական հոսանքին եւ գլխավորում այն: Նրա հետ համակամ էին նաեւ Աղվանից եւ Վրաց եկեղեցիները ու հաշվի էին նստում պարսկական ու ասորական հոգեւոր գործիչները: Ճիշտ է նկատել Հայոց Եկեղեցու պատմությանը քաջագիտակ Մաղաքիա արքեպ. Օրմանյանը. «Հայ Եկեղեցին հեղինակաւոր դիրք ունէր Արեւելեան քրիստոնէութեան մէջ, եւ իրեն դրացի եկեղեցիները, Վրացին ու Աղուանը հիւսիսէն, Ասորին ու Պարսիկը հարաւէն, իրենց հաւատոյ կանոնը եւ պետական պաշտպանութիւնը կը սպանային Հայոց հովանաւորութեամբ»[18]:

Վերեւում նշվեց, որ ժողովի մասնակից պարսիկ եւ ասորի պատվիրակները հավաքում ընդունված կանոնները սեփական իշխանություններին ու ժողովրդին ծանոթացնելու համար նամակներ են տարել իրենց հետ: Ելնելով դրանից, հնարավոր ենք համարում, որ հայրենիք վերադառնալիս, նրանց օրինակով, նման նամակներ իրենց հետ վերցրել են նաեւ Աղվանքից ժամանած եպիսկոպոսները՝ իրենց վիճակներում ապրող քրիստոնյաներին նույնպես ժողովի սահմանումներին հաղորդակից դարձնելու միտումով:

Իրադարձությունների զուգադիպությամբ, ուսումնասիրվող շրջանում Քաղկեդոնի ժողովի որոշումների ու Լեւոնի տոմարի ժիտմամբ հանդես էին գալիս նաեւ հույնե-

14 «Գիրք Թղթոց», էջ 41:
15 **Ա. Շ. Մնացականյան**, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երեւան, 1966, էջ 11-12:
16 Անդ, էջ 12-13:
17 «Գիրք Թղթոց», էջ 41:
18 **Օրմանեան,** էջ 592:

ը: Կաղանկատվացու վկայությամբ՝ «Ի ժամանակս Բարգենայ՝ Հայոց Կաթողիկոսի, Յոյնք եւ ամենայն Իտալիա, Հայք եւ Աղուանք եւ Վիրք միաբանեալ նզովեցին զչարափառ ժողովն Քաղկեդոնի եւ զտոմարն Լեւոնի»[19]: Ինքը՝ Բարկեն կաթողիկոսն էլ է նշել, թե «մեք Հայք եւ Հոռոմք, Վիրք եւ Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով»[20]: Հիշյալ չորս եկեղեցիների դավանաբանական միասնության մասին մեկից ավելի անգամ ընդգծված է նաեւ մի շարք այլ գրություններում[21] ու Հովհաննես Դրասխանակերտցու մոտ: Կաթողիկոս-պատմիչի հաղորդմամբ՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանում «մի հաւատ բարեպաշտութեան առհասարակ հաստատեալ լինէր յաշխարհին Հոռոմոց, Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ հաւասար ամենեցունց»[22]: Այս միաբանությունը հնարավոր էր միայն Բյուզանդիայի կայսր Զենոնի «Հենոտիկոնի» («Միության գիր») 482 թ. ընդունումից հետո: Նրանում կայսրը (474-491 թթ.) առաջ էր քաշում Քաղկեդոնի ժողովի որոշումների ժխտման, այդ հարցում տարբեր տեսակետների միմյանց հետ հաշտեցման եւ, առհասարակ, քրիստոնեական աշխարհի երկպառակության վերացման խնդիրը[23]: Ըստ ուսումնասիրողների՝ «506 թվից առաջ արդեն կամ գոնե ամենաուշը այդ թվին հայերը, վրացիք եւ աղվանները պետք է Զենոնի Հենոտիկոնը ընդունած լինեն եւ հոռոմների հետ համաձայնած»[24]: Սակայն Հենոտիկոնը, ինչպես ասում է Մ. Օրմանյանը, «իր նպատակին չծառայեց. երկու կողմերն ալ իրենց ուզածը չգտան անոր մէջ»[25]: Պայքարը Քրիստոսի բնության շուրջ շարունակվում է: Ուստի, 554 թ. Ներսես Բ. Բագրեւանդցի (Ալաշկերտցի-Աշտարակցի) Կաթողիկոսի (548-557) գլխավորությամբ, դարձյալ Դվինում, հրավիրվում է երկրորդ եկեղեցական ժողովը, ուր կրկին քննության են առնվում քաղկեդոնականության եւ այդ ժամանակ նույնչափ վտանգ պարունակող մի այլ աղանդի՝ նեստորականության դեմ պայքարի հարցերը: «Զայս ժողով, - գրում է Հովհան Օձնեցին, - արար Տէր Ներսէս հակառակ ժողովոյն Քաղկեդոնի»[26]: Վերջին մտքի հետ, սակայն, համաձայն չեն Ն. Ակինյանը, Մ. Օրմանյանը եւ Վ. Վարդանյանը: Առաջինը կարծում է, որ այստեղ խոսվում է «խուժիկ նեստորականներու այսինքն՝ պաւղիկեաններու» մասին, քանի որ թղթում ակնարկ անգամ չկա քաղկեդոնականների ու այլ աղանդավորականների վերաբերյալ[27], իսկ երկրորդը, նույն պատճառաբանությամբ, Քաղկեդոնի հիշատակությունն այստեղ համարում է շփոթություն, որ տեղի է ունեցել հիշյալ երկու աղանդների միջեւ առկա սերտ

19 **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ 270 (այսուհետ՝ Կաղանկատուացի):

20 «Գիրք Թ-ղթոց», էջ 221:

21 Տե՛ս անդ, էջ 43, 45, 46 եւ հաջ.:

22 «Հովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Երեւան, 1996, էջ 64 (այսուհետ՝ Դրասխանակերտցի):

23 Զենոնի «հենոտիկոնի» արձագանքների մասին մանրամասն տես **Վ. Մ. Վարդանյան**, Հայոց եկեղեցին ..., էջ 233-241:

24 **Ե. Տեր-Մինասյան,** նշվ. աշխ., էջ 40:

25 **Օրմանեան**, էջ 575:

26 «Գիրք Թ-ղթոց», էջ 221:

27 Տե՛ս **Ն. Ակինեան**, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատոռուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 183:

առնչության հետևանքով, եւ գտնում, որ ժողովն ուղղված է եղել նեստորականության դեմ[28]: Նույն կարծիքին է եւ Վ. Վարդանյանը[29]: Այսպես թե այնպես, Դվինի 554 թ. եկեղեցական ժողովը «մեկընդմիշտ մերժեց քաղկեդոնյան Հավատո բանաձեւը: Դրանով իսկ ցայտուն որեն դրսեւորվեց Հայոց Եկեղեցու դավանական եւ նվիրապետական անկախությունը մյուս Եկեղեցիներից եւ ավելի կարեւորվեց նրա՝ իբրեւ քաղաքական ազդու գործոնի դերը»[30]: Դվինի երկրորդ ժողովին աղվանցիների մասնակցության մասին տեղեկություններ չկան: Սակայն նրանց ու հայերի միջեւ հաստատված դավանական համերաշխությունն ու չարիքի դեմ համատեղ պայքարելու միակամությունը թույլ է տալիս ենթադրելու, որ աղվանցիներն ունեցել են իրենց ներկայացուցիչները ժողովում: Դրացիների դավանաբանական միաբանությունը մնացել էր անհափոխ, եւ դա ցույց են տալիս նաեւ հետագա իրադարձությունները:

Ուսումնասիրվող շրջանում Ներսես Բ. Բագրեւանդցի Հայոց Կաթողիկոսի աթոռակիցն Աղվանքի մարզում Աբասն էր՝ ընտրված Արցախ նահանգի Մեծառանք (Մեծիրանք) եպիսկոպոսությունից[31], որ հովվել է քառասուն չորս տարի (552-596 թթ.): Նա առաջինն էր Աղվանքի հայրապետների մեջ, որ սկսում է կրել «Կաթողիկոս» տիտղոսը: Կաղանկատվացին գրում. «Առ սովաւ (Աբասի օրով - **Հ.Ս.**) կալան սովորութիւն գրել ի պատրուակ թղթի Աղուանից, Լփնաց եւ Չողայ Կաթողիկոս»[32]: Նույնը անէական տարբերություններով նշում է եւ Մխիթար Գոշը[33]: Աղվանքի հոգեւոր առաջնորդի համար առաջին անգամ գործածվող այդ տիտղոսը աներկբայորեն ցույց է տալիս, որ երկրի հոգեւոր կյանքում տեղի էին ունեցել այնպիսի տեղաշարժեր, որոնք Զ. դարի երկրորդ կեսում հանգեցրել էին նրա եկեղեցական-վարչական գերագույն մարմնի՝ կաթողիկոսության ձեւավորմանը[34]: Այսուհետ վերջինիս գլուխ կանգնած հովվապետը մեծարվում էր «կաթողիկոս» տիտղոսով: Այսպիսով, Աղվանից կաթողիկոսությունը կազմավորվել է Աբասի հովվելու հետ միաժամանակ՝ 552 թ., եւ ճիշտ չէ նրանից առաջ այլ կաթողիկոս տեսնելը[35]: Մարզպանական Աղվանքի նորահաստատ կաթողիկոսության իրավասությունը, դպրելով «Պատրուակ» (Գոշի մոտ՝ «Պատրիսակ») թղթերի, (հանձնարարականների) վրա դրոշմվելիք գրությունից, տարածվում էր Աղվանք (իմա՛ Հայոց Արեւելից կողմանց), Լփինք (Բուն Աղուանք) եւ Չող (Դերբենդ) երկրների կամ, այլ խոսքով, ամբողջ մարզպանությունով մեկ սփռված թեմերի վրա: Ի դեպ, տեղին է նկատել, որ նշվածներն այն երկրներն էին, որոնցում իր ինքնուրույն քարոզչական գործունեութ-

28 **Օրմանեան,** էջ 634-635:

29 **Վ. Մ. Վարդանյան**, Հայոց եկեղեցին..., էջ 252:

30 Անդ, էջ 256:

31 Տե՛ս **Կաղանկատուացի**, էջ 343:

32 Անդ:

33 «Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ. դարու», տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայապատում պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 384 (այսուհետ՝ Հայապատում). նաեւ, Կաղանկատուացի, էջ 350:

34 Աղվանից կաթողիկոսության նախաստեղծ շրջանի մասին տե՛ս **Բ. Ա. Ուլուբաբյան,** Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Երեւան, 2001, էջ 98-118, նաեւ **Մ. Բալայան**, Հայ-Աղվանից եկեղեցին, էջ 36-46:

35 Հարցի շուրջ առկա կարծիքների քննությունը տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** անդ, էջ 98-108:

յունն էր ծավալել Ս. Թադեոս առաքյալի աշակերտ Ս. Եղիշան[36], կարծես նախանշելով Աղվանքի ապագա կաթողիկոսությանը ենթակա վիճակները:

Մինչ Աբասի կաթողիկոսությունը Աղվանից հայրապետների նստոցը Չողն էր: Այդ մասին վկայում են սկզբնաղբյուրները, միայն թե ոչ բոլոր ուսումնասիրողներն են համաձայն նրանց հետ: Բ. Ուլուբաբյանն, օրինակ, առհասարակ ժխտում է Չողի դերը «քրիստոնեական եկեղեցու համար» եւ «նրան վերագրված ամեն մի նման պատմություն» համարում հեքիաթի ժանրից[37]: Բայց սխալվում է հարգարժան հետազոտողը: Աղբյուրագիտական տվյալների անտեսմամբ նման կարծիք հայտնելով, նա, փաստորեն իր խոսքը վերածում է պարզ մի հայտարարության:

Հարց է նաեւ թե երբ է Չողը դարձել Աղվանքի հայրապետների կենտրոնատեղի: Ըստ Ա. Հակոբյանի դա տեղի է ունեցել երկրում 462թ. թագավորության վերացունից հետո[38], որը, մեր կարծիքով, վերանայման կարիք ունի: Մխիթար Գոշը, ով Աղվանքի հայրապետների ցանկի հեղինակն է, խոսելով Մանուկ Գրիգորիսի նահատակության մասին, շարունակության մեջ հատուկ ընդգծում է, որ նրան անմիջապես հաջորդած չորս հայրապետները հռվվել են Չողից: Նա գրում է. «զՍուրբն Գրիգորիս...ի բարբարոսաց վախճան մահու ընկալաւ. Հոռոմ թիվ ՃԱ. էր: Եւ այսոքիկ են որք ի Չոլ հայրապետք նստան. Զաքարիա, Դաւիթ, Սուրբն Յոհան, Երեմիա»[39]: Այստեղից պարզ երեւում է, որ Չողը Աղվանքի հայրապետական նստոց է եղել շատ ավելի վաղ, քան նրա համար մատնանշված ժամանակներն են: Մյուս կողմից, Մխիթար Գոշի հաղորդումից այն տպավորությունն է ստացվում, որ Չողում նստած հայրապետներից առաջինը՝ անվանապես նշված Զաքարիան, հաջորդել է արդեն իրենից առաջ եղածներից մեկին: Դա մակաբերելի է հատկապես նրանից, որ հաղորդման մեջ անցումը Գրիգորիսից Չողում աթոռակալած առաջնորդներին կատարվում է միանգամից, առանց որեւէ միջանկյալ շեշտադրումների: Տրամաբանությունը հուշում է, որ այդպիսի մեկը ինքը՝ Մանուկ Գրիգորիսն էր: Այս շատ հավանական ենթադրությունը ուժ է ստանում նաեւ պատմական իրադարձությունների ընթացքով: Հայտնի է, որ Դ. դարի սկզբներին Մասքթաց աշխարհում քարոզչական աշխատանքներ էր ծավալել Մեծն Գրիգորիսի այս թոռը: Նման գործունեության համար նա, անշուշտ, ունենալու էր իր նստավայրը տեղում, եւ դա կարող էր լինել Չողը: Սա կենտրոնատեղի դարձնելով՝ Մանուկ Գրիգորիսը շատ չանցած նահատակվում է՝ խոշտանգվելով բարբարոսների կողմից, որից հետո նրա հաջորդներն, իբրեւ Աղվանից աշխարհի հայրապետներ, նստում են հիմնարկած նստավայրում: Հետեւաբար, Չողը Աղվանքի հոգեւոր կենտրոն էր դարձել դեռեւս Դ. դարի սկզբներից եւ նրա վերածումը նման կենտրոնի տեղի էր ունեցել Մանուկ Գրիգորիսի կողմից: Իր այս դերը պահպանում է մինչեւ Աբասի Կաթողիկոս օծանելը: Դառնալով Կաթողիկոս՝ Մեծառանք գավառի նախկին եպիսկոպոսը հարկ

36 **Հ. Ս. Սվազյան,** Սուրբ Եղիշան Հայոց Արեւելից կողմանց, Չողա երկրի եւ Աղվանից աշխարհի լուսավորիչ, «Լրաբեր, հաս. գիտ.», 2000, թ. 2, էջ 55-65:

37 Տե՛ս **Բ. Ուլուբաբյան,** անդ, էջ 119:

38 Տե՛ս **А. А. Акопян,** *Албания-Алуанк*, էջ 134:

39 «Հայապատում», էջ 394. **Կաղանկատուացի,** էջ 350 (ընդգծ. Հ. Ս.):

է համարում նոր Կաթողիկոսին վայել աթոռանիստ ունենալ եւ ընտրում է Աղվանից մարզպանության մայրաքաղաք Պարտավը, ուր տեղակայված էին նաեւ մարզի աշխարհիկ իշխանությունները: Այդ մասին իրազեկում է Կաղանկատվացին՝ գրելով, որ Տեր Աբասը «Ի սկզբանն թուականիս Հայոց (այսինքն՝ 552 թ.-Հ. Ս.) փոխեաց զաթոռ հայրապետութեան ի Չողայ ի Պարտաւ»[40]: Նույնը, բայց շարադրանքի մի փոքր այլ ձեւով, հայտնում է եւ Գոշը[41]: Այսպիսով՝ շուրջ երկու հարյուր տարի Աղվանքի հայրապետների համար նստավայր ծառայելով, Չողը տեղը զիջում է Պարտավին: Այնուհետեւ Աբասից սկսած, Աղվանից մարզի կաթողիկոսները նստում էին Պարտավում: Ըստ Կաղանկատվացու՝ այս տեղափոխությունը կատարվել էր «վասն հինահալած արշաւանաց թշնամեացն խաչին Քրիստոսի»[42]: Իրավ է, որ այդ շրջանում խազարների արշավանքները դարձել էին ավելի հաճախակի ու վտանգավոր եւ Աղվանից եկեղեցու անվտանգության ապահովումը դարձել էր առաջնահերթ խնդիր: Բայց սա միակ պատճառը չէր: Ճիշտ է, տեղափոխվելով Պարտավ, կաթողիկոսությունը կլիներ այստեղ գտնվող աշխարհիկ իշխանությունների կողքին եւ վայելելով նրանց հովանավորությունը՝ ավելի պաշտպանված կզգար իրեն, սակայն գլխավորը, կարծում ենք, երկրում կենտրոնացված ուժեղ իշխանություն ունենալու ձգտումն էր, որը հանգեցրեց հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների մեկտեղմանը միեւնույն վայրում: Պակաս կարեւոր չէր այն հանգամանքը, որ Չողը, գտնվելով մարզպանության ծայր հյուսիսարեւելքում, զգալիորեն դժվարացնում էր ողջ մարզպանության տարբեր մասերում հաստատված թեմերի կառավարումը կամ վերահսկումը: Փոխադրվելով Պարտավ, որ աշխարհագրորեն ընկած էր տվյալ վարչաքաղաքական միավորի համեմատաբար կենտրոնական շրջաններում, նորահաստատ հոգեւոր իշխանությունն ավելի դյուրությամբ կիրականացներ առանձին եպիսկոպոսությունների հետ տարվող աշխատանքը եւ կպահպաներ իր վերաշխարհիկ ազդեցությունը նրանց վրա:

Այսպիսով, Աղվանից կաթողիկոսությունը կազմավորվում է Զ. դարի կեսերին եւ Աբասի առաջնորդությամբ տեղակայվում Պարտավում: Աղվանքի կաթողիկոսները իրենց նախորդների նման նույնպես ենթարկվում էին Դվինում նստող Հայոց Վեհապետին եւ, դեռեւս Գրիգոր Լուսավորչի սահմանած կարգի համաձայն, ձեռնադրությունն ստանում էին նրանից:

Նոր ժամանակներում եւս Արեւելքի եւ, մասնավորապես, Հայոց աշխարհի ու հարեւան Աղվանից երկրի հասարակական-կրոնաքաղաքական կյանքը վրդովում էին հայտնի դավանաբանական վեճերը: Դրանք առանձնապես սրվում են Աղվանքում, որտեղ աշխուժացել էին քաղկեդոնական եւ նեստորական աղանդները: «Զայն շփոթ աղմկի սփռեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի ի ժողովոյն Քաղկեդոնի...զորացաւ սուտ վարդապետութիւնն նոցա»,-ցավով նշում է Կաղանկատվացին[43]: Ստեփա-

40 **Կաղանկատուացի,** էջ 342-343:
41 «Հայապատում», էջ 384 եւ **Կաղանկատուացի**, էջ 350:
42 **Կաղանկատուացի**, էջ 119:
43 Անդ:

նոս Օրբելյանն էլ է գրում, որ Սյունյաց եպիսկոպոս Տեր Վրթանեսի փարիներին «եկին ոմանք նեստորականք ու քաղկեդոնիկք եւ խաբկանօք բնակեցան յաշխարհս Սիսական եւ յԱղվանս»[44]: Աղվանքում տեղավորվել եւ հաջողությամբ իրենց չար աղանդի որոմներ տարածողներից էին վարդապետներ «զԹ-ումասն կեղծաւոր եւ զփսաղտն (սաղմոսերգու-Հ.Ս.) Եղիա եւ զԲնոտն եւ զԻբաս», որոնք ունեին իրենց հետեւորդները՝ «զնմանողս»[45]: Սրեղծված վիճակը ստիպում է ելք փնտրել, եւ Ներսես Բ. Բագրեւանեցու հաջորդ Հովհաննես Բ. Գաբեղենացին (557-574 թթ.) Դվինում ժողով է գումարում, ուր քննության է դրվում աղանդավորականության դեմ պայքարի, այս կապակցությամբ կանոնակարգային փոփոխություններ կատարելու եւ այլ հարցեր: Ընդհանուրի համաձայնությամբ որոշվում է նամակներ ուղարկել Աղվանից Կաթողիկոս Տեր Աբասին ու Սյունյաց եպիսկոպոս Տեր Վրթանեսին եւ նրանցից պահանջել պատժել չարագործներին ու կանխարգելել նրանց գործունեությունը իրենց երկրներում: Դրանցում Հովհաննես Երկրորդը հասցեատերերին ահազանգում է աղանդավորներից եկող վտանգի մասին եւ խնդիր դնում. «Նովիւք ի բաց մերժեցէք եւ ամենայն ուղղափառաց պատուիրեցէք մի՛ լինել հաղորդ անպտղութեան գործոց նոցա եւ մի՛ լսել հրապուրող եւ չարաթոյն բանից նոցա մահաբերաց»[46]: Նամակները տեղ է հասցնում Հայոց Կաթողիկոսի վստահությունը վայելող Մատթեոս անունով մի քահանա[47]: Բայց կարծում ենք, որ նա սոսկ նամակներ տանելով չի սահմանափակվել: Լինելով Կաթողիկոսի հատուկ հանձնակատարը՝ Մատթեոսը, ամենայն հավանականությամբ Սյունիքում եւ Աղվանքում հանդիպումներ է ունեցել, ցույց տվել աղանդների վնասակարությունը եւ, կոչ անելով անխնա լինել նրանց հանդեպ, միասնություն քարոզել: Ի մասնավորի, Աղվանքի Կաթողիկոսին ուղղված նամակում հանձնարարվում էր նրան հաստատուն պահել դեռեւս իրենց հայրերի սահմանած միաբանության ուխտը, հետեւել ժողովում ընդունված կանոններին ու, ըստ այդմ, հավելումներ անել իրենց կողմից կատարվող ժամերգություններում: «Զոր սա,-գրում է արդեն Մովսես Դասխուրանցին,- ի ժողովոյն Դունայ ասել մի բնութիւն աստուածութեան եւ մարդկութեան, եւ յաւելուլ ի սուրբ Աստուածդ անմահ եւ խաչեցար»[48]:

Ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է նամակի «Գիրք թղթոց»-յան տարբերակում Աբասին տրվող «Պարտավի եպիսկոպոս»[49] նվիրապետական աստիճանն այն դեպքում, երբ Կաղանկատվացին նրան ճանաչում է իբրեւ «Կաթողիկոս»[50]: Աբա-

44 «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 97-98 (այսուհետ՝ Օրբելան):

45 **Կաղանկատուացի,** էջ 126:

46 «Գիրք թղթոց», էջ 79-80:

47 Տե՛ս անդ, էջ 79-83:

48 **Կաղանկատուացի**, էջ 343. Նաեւ Օրբելեան, գլ. ԻԴ (ընդգծ. Հ.Ս.): Ավելորդ չենք համարում նշել, որ ընդգծված կապակցությունն ընդարձակ տեսքով հնչում է այսպես. «Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա նեզ» (Գիրք թղթոց, էջ 83. **Կաղանկատուացի,** էջ 124-125): Սույն հավելումը նպատակ ուներ, ի հակադրություն նեստորական ու քաղկեդոնական ուսմունքների, շեշտելու Քրիստոսի մեկ՝ աստվածային ու մարդկային մեկտեղված բնություն ունենալու էությունը:

49 «Գիրք թղթոց», էջ 81:

50 **Կաղանկատուացի,** էջ 122:

սին «եպիսկոպոս» է կոչում նաեւ Երուսաղեմի եպիսկոպոս Հովհաննես Երուսաղեմցին, նրան հղած իր թղթում[51]: Ա Հակոբյանի կարծիքով չարժե այս երկու փաստերից հեռուն գնացող հետեւություններ անել[52], իսկ Բ. Ուլուբաբյանը՝ բացատրում առհասարակ Աղվանքի կաթողիկոսների նկատմամբ Հայոց հայրապետների դրսեւորած վերաբերմունքով: Ըստ նրա, իբր, «Դվինի կաթողիկոսներն սկզբնապես չպիտի ընդունած լինեին Աղվանքում սկզբնավորվող կաթողիկոսությունը», ուստի եւ նրանք «միանգամից եւ հաճույքով պիտի չընդունեին ասպարեզ նետված «Կաթողիկոս Աղուանից, Լփնաց եւ Չողայ» բավական հավակնոտ տիտղոսը»[53]: Բայց չենք կարծում, թե ճիշտ է հետազոտողը: Հայ կաթողիկոսները հազիվ թե դժկամ վերաբերմունք դրսեւորեին Աղվանքի իրենց աթոռակիցների նկատմամբ, մանավանդ որ վերջիններս հանդես էին գալիս իբրեւ հայերի գաղափարական-կրոնական դաշնակիցներ: Ավելի պարզ է եւ ընդունելի արքեպ. Մաղաքիա Օրմանյանի մեկնաբանությունը, որի համաձայն «Աղվանից կաթողիկոսներ երկու անուններն ալ անիտիր կամ միասին կը գործածէին»[54]: Ուստի հնարավոր է ենթադրել, որ հենց այս պատճառով Աբասին եպիսկոպոս է անվանում Հովհաննես Երուսաղեմցին՝ այդ երկու տիտղոսների մեջ տեսնելով միեւնույն իմաստը: Վերջին տեսակետի հավանականությունը մեծանում է նրանով, որ հայ մատենագրության մեջ հայտնի են դեպքեր, երբ Աղվանքի հոգեւոր հայրերը ներկայացվել են «եպիսկոպոսապետ»[55], «աւագ եպիսկոպոսապետ» կամ «արքեպիսկոպոսապետ»[56] տիտղոսներով: Կարելի է թույլ տալ նաեւ մի այնպիսի ենթադրություն, թե Աբասը, լինելով Պարտավում հաստատված կաթողիկոսության գահակալ, միաժամանակ առաջնորդել է եւ նույն տեղում տեղակայված եպիսկոպոսությունը, որն էլ առիթ է ծառայել նրան «Պարտավի եպիսկոպոս» կոչելուն:

Հովհաննես Բ. Կաթողիկոսի նամակ-հանձնարարականը ուղղված էր Աբասին եւ երկրամասի մի շարք եպիսկոպոսների «Մովսէսի Բահաղատու եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղականու եպիսկոպոսի, Հոռոմակայ Ամաղասու եպիսկոպոսի, Տիմոթէի Բաղասականու եպիսկոպոսի, Ամբակումայ Շաքւոյ եպիսկոպոսի, Յոհանկայ

Գարդմանայ եպիսկոպոսի, Ղեւոնդի Մեծկուանց եպիսկոպոսի»[57]: Ըստ ցանկի, ինչպես տեսնում ենք, Աղվանքի եպիսկոպոսներն ու համապատասխան եպիսկոպոսությունները թվով ութն են: Բայց իրականում դրանք ավելին էին: Դրանցից մեկն էր Պարտավի եպիսկոպոսությունը, որը վկայված է հայ մատենագրության մեջ իր Շուփ-

51 «Արարատ», 1896, էջ 252-256:

52 **А. А. Акопян,** *Албания-Алуанк* ..., էջ 131-132:

53 **Բ. Ուլուբաբյան**, Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին..., էջ 111:

54 **Օրմանեան,** էջ 651:

55 **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Երեւան, 1991, էջ 329:

56 **Կաղանկատուացի,** էջ 85, 89. նաեւ «Սահմանադրութիւն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի, եղեալ ի ժողովոյն որ յԱղուէնս եղեւ», «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ., աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երեւան, 1971, էջ 91-92:

57 «Գիրք թղթոց», էջ 81:

հաղիշոյ[58] անվամբ եպիսկոպոսով[59], մյուսը՝ Արցախի Մեծառանք գավառի եպիսկոպոսությունը, որտեղ մինչ Կաթողիկոս դառնալը պաշտոնավարում էր ինքը՝ Աբասը, Չողը՝ Աղվանից հայրապետների երկարամյա նստոցը եւ այլն: Հետեւաբար, Աղվանից կաթողիկոսությանը ենթակա ոչ բոլոր եպիսկոպոսներին է ուղղված եղել նամակը, ինչը ամենայն իրավամբ թույլ է տալիս ենթադրելու, որ նշվածները նրանցից էին, ովքեր ավելի ազդեցիկ դիրք ունեին եւ իրենց հեղինակությամբ կարող էին օժանդակել Աբասին՝ երկիրը աղանդներից մաքրելու գործում:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ նշված եպիսկոպոսներից չորսը Հայոց Արեւելից կողմերից էին՝ երկուսը Արցախից (Հռոմիկը Ամարասից եւ Ղեւոնդը՝ Մծկուենից), երկուսը Ուտիքից (Աբասը Պարտավից եւ Յոհան Գարդմանից): Վկայակոչված հաղորդումը ուշագրավ է նաեւ նրանով, որ հաստատում է բերված այն կարծիքը, թե հայ-աղվանական հարաբերություններում, չնայած անվանապես չհիշատակվելուն, գործուն մասնակցություն ունեին նաեւ Ուտիքի ու Արցախի թեմերի հոգեւոր առաջնորդները՝ հանդես գալով «աղվանացիներ» ընդհանուր անվան տակ:

Նամակն ստանալով, Աբասը Հայոց Վեհապետի հանձնարարականին հետամուտ, անցնում է վճռական գործողությունների: Կաղանկատվացու վկայությամբ՝ նա «յոյզ քննութեան առնելով իւրուք եպիսկոպոսօք»[60], բացահայտում է Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դավանանքից շեղվածներին եւ զանազան միջոցներով արգելում նրանց գործունեությունն իր երկրում: Աբասը խիստ հալածանքների է ենթարկում հատկապես վերոհիշյալ վարդապետներին եւ արտաքսում երկրից իրենց հետեւորդների հետ միասին: Աղվանքի Կաթողիկոսը, վկայում է Կաղանկատվացին, «իւրովք եպիսկոպոսօք որ վերագոյնդ կան ի գրի (նկատի ունի նամակում նշվածներին-Հ. Ս.) նոքօք հանդերձ հալածեաց ի տանէ Աղուանից զպիղծ վարդապետս աղանդոյն այնորիկ՝ զԹ-ոմասն կեղծաւոր եւ ի փսաղտն Եղիա եւ զԲնտոն եւ զԻբաս եւ զայլսն ընդ նոսա զնմանողս նոցին արար տարաբնակ ի հեռաւոր վայրս»[61]: Այս միջոցառումների շնորհիվ «Աղվանից տանը» խաղաղություն է հաստատվում՝ պահպանելով միակամությունը Հայոց Եկեղեցու հետ: Ուստի դժվար է համաձայնել Ն. Ակինյանի այն մտքի հետ, թե «Աղուանից Եկեղեցին Զ. եւ Է. դարերուն քաղկեդոնական էր եւ իբրեւ այսպիսի բաժնուած Հայոց Եկեղեցւոյ միութենէն»[62]: Գուցե եւ քաղկեդոնականությունն Աղվանքում հասել էր հաջողությունների, իսկ Աբասը ինչ-ինչ պայմաններից ելնելով հանդուրժողական վերաբերմունք էր դրսեւորել նրանց նկատմամբ, բայց դա արագ վերացել էր նույն Կաթողիկոսի ջանքերով, եւ Աղվանից պաշտոնական եկեղեցին շարունակում էր մնալ Հայոց հետ իբրեւ դավանաբանական դաշնակից: Նամակով Հովհաննես Գաբեղենացին Աբասին առաջարկում էր իր եպիսկոպոսներից երեքին կամ ավելին ուղարկել Հայաստան՝ իրենց մոտ նախապատրաստական շրջան անցնելու եւ ստացած գիտելիքնե-

58 Այս անձի ինքնության հետ կապված հարցերը առանձին ուսումնասիրության նյութ են:

59 **Կաղանկատուացի,** էջ 85, 89, «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ., էջ 91-92:

60 **Կաղանկատուացի,** էջ 126:

61 Անդ:

62 «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1953, էջ 162:

ը երկրի բարօրության համար օգտագործելու նպատակով. «Հաճոյ թուեցաւ,- գրում է նա,-գալ ի ձէջ այսր եպիսկոպոսաց երից կամ աւելեաց. լսելով ի մէնջ յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն զի մի՛ ոք կորիցէ ի հովուաց կամ ի հաւտից, այլ ի վերայ բարւոյ գիւտի ձերոյ եղիցի»[63]:

Հովհաննես Բ. Գաբեղենացու օրոք հայերի գլխին կրկին կախվում է հավատափոխության սպառնալիքը: Պարսից արքայից արքա Խոսրով Ա. Անուշիրվանը (531-578) 564 թ. Հայաստանի մարզպան է նշանակում իր ազգական Սուրեն Ճիհովր-Վշնասպին՝ գործողությունների ազատություն տալով նրան: Գալով Հայաստան՝ սա անմիջապես անցնում է Պարսից արքունիքի նկրտումների իրագործմանը. բարձրացնում է հարկերը, ոտնահարում հայ նախարարների իրավունքները. շատերին՝ մասնավորապես Մամիկոնյանների հայտնի տոհմից Մանվել Մամիկոնյանին, սպանում եւ, որ ավելի վատթարն էր, Հայոց Կաթողիկոսից պահանջում է «կրակի ատրուշան կառուցել, որպեսզի թագավորի հավատի համաձայն ծես կատարվի»[64]: Կաթողիկոսը եւ ժամանակի Հայոց զորքերի սպարապետ Վարդան Մամիկոնյանը (Կարմիր Վարդանը) պահանջում են դադարեցնել ատրուշանների կառուցումը, բայց ապարդյուն[65]: Պարսիկ մարզպանի սանձարձակ գործողությունները ոտքի են հանում հայերին, եւ նրանք 571 թ. սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբում են պարսից դեմ[66]: Ապստամբության ռազմական առաջնորդը Վարդան Մամիկոնյանն էր, գաղափարականը՝Հովհաննես Երկրորդը: Տեսնելով հայերի նախապատրաստությունը՝Սուրեն մարզպանը շտապ մեկնում է Պարսկաստան եւ Խոսրով Երկրորդից երկու հազարանոց բանակ ստանալով՝ վերադառնում է Հայաստան: Սակայն հայերը, չսարսելով նրա թվական գերակշռությունից, իրենք են հարձակվում Դվինում բանակած պարսից զորքերի վրա, կոտորում նրանցից շատերին, սպանում մարզպանին[67], իսկ մնացածներին քշում երկրի սահմաններից: Հայերի այս հանդուգն արարքը, անշուշտ, Խոսրով Անուշիրվանը չէր ներելու եւ նոր արշավանքներ էր կազմակերպելու դեպի Հայաստան: Ստեղծված ծանր իրադրությունից դուրս գալու նպատակով, Վարդան Մամիկոնյանն ու Հովհաննես Բ. Կաթողիկոսը մի խումբ նախարարների ու հոգեւորականների հետ ընտանիքներով մեկնում են Կոստանդնուպոլիս Հուստինոս Բ.-ի (565-578 թթ.) մոտ[68],

63 «Գիրք թղթոց», էջ 84:

64 «Եփեսոսի Հովհան եպիսկոպոսի Եկեղեցական պատմություն» տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», 8, Ասորական աղբյուրներ Ա, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երեւան, 1976, էջ 288 (այսուհետ՝Ասորական աղբյուրներ):

65 Անդ, էջ 288-289:

66 571-572 թթ. տեղի ունեցած այս ապստամբության մանրամասները տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հատ. II, Երեւան, 1984, էջ 257-263:

67 Ըստ Ասողիկի պարսիկ մարզպանին սրախողխող (սուսերահատ) էր արել Վարդան Մամիկոնյանը (տես Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 84), (այսուհետ՝Ասողիկ), իսկ ըստ Անանիա Շիրակացու՝ Զորակ Կամսարականը տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Երեւան, 1944, էջ 228 (այսուհետ՝Անանիա Շիրակացու մատենագրությունը):

68 **Ասողիկ**, էջ 85: **Արսեն Սափարեցի**, Վրաց եւ Հայոց բաժանման մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հատ. Ա, Երեւան, 1934, էջ 42, (այսուհետ՝Վրաց աղբյուրները), Ասորական աղբյուրներ, էջ 390-391:

նրանից օգնական ուժեր ստանալու ակնկալիքով: Սա մի բարեպատեհ առիթ էր հայերին քաղկեդոնականության հակելու Բյուզանդիայի վաղեմի ծրագրի իրականացման համար, եւ կայսրը ճարպկորեն օգտագործում է այն: Հարկերից ազատելու եւ այլ շռայլ խոստումներ տալով[69], Հուստինոսը միաբանվելու առաջարկ է անում, որը, սակայն, հայերը մերժում են, առաջ քաշելով Քաղկեդոնի ժողովի սահմանումների նկատմամբ իրենց ունեցած տարաձայնությունները[70]: Կայսրը մնում է անդրդվելի եւ նույնիսկ այդ նպատակով հատուկ ժողով է գումարում: Ժողովում, անկասկած, Հուստինոսի, պատրիարք Հովհան Սքոլաստիկոսի ու այլ կղերականների ճնշման տակ, հայերը «հաղորդվում են» եւ դառնում քաղկեդոնական[71], որ ուղղակի կեղծիք էր: Հովհաննես Բ.-ն, Վարդան Մամիկոնյանն ու ժողովին մասնակից մի խումբ հայ նախարարներն ու

հոգեւորականները դիմում են այդ քայլին Բյուզանդիային սիրաշահելու եւ նրանից օգնական ուժեր ստանալու սպասումներով: Որ իսկապես հայերը առերես են «հաղորդվել» հույների հետ, ցույց է տալիս այն փաստը, որ նրանք միանգամից չէ, որ համաձայնվել են Հուստինոս Բ.-ի հետ: Դրա համար հարկավոր են եղել վերջինիս հատուկ ջանքերը: Ասվածն ուժ է ստանում նաեւ նրանով, որ դավանափոխ եղածներից շատերը, հայրենիք վերադառնալով վերստին անցնում են իրենց նախնյաց հավատին[72]: Իմանալով նոր դիրքորոշման մասին հայերը ընդվզում են հավատափոխների դեմ եւ խիստ խոսքերով դատապարտում նրանց[73]: Ուստի, անկախ ոմանց հավատափոխությունից, ողջ հայությունը այս վտանգավոր շրջանում եւս պահպանում է կրոնական ջերմեռանդությունը եւ հավատարիմ մնում հինավուրց եւ նման փորձությունների միջով ոչ մեկ անգամ անցած առաքելաշնորհ հավատին: Հայերի ու հույների «միաբանությունը» կարճ կյանք է ունենում: Արդեն Կոնստանդնուպոլսում 574 թ. վախճանված Հովհաննես Բ. Կաթողիկոսի հաջորդ Մովսես Բ. Եղիվարդեցին այն պաշտոնապես մերժում է:

Նկարագրվող վերջին իրադարձություններին աղվանացիների մասնակցության մասին հստակ տեղեկությունները պակասում են: Սակայն, ըստ որոշ ուսումնասիրությունների, նրանք, հայերի մյուս հարեւանների՝ վրացիների հետ միասին, եղել են հիշյալ իրադարձությունների մասնակիցներ եւ կիսել առաջինների ճակատագիրը[74]3:

Կոստանդնուպոլսում վախճանված Հովհաննես Երկրորդին, ինչպես ասացինք, հաջորդում է Մովսես Բ. Եղիվարդեցին (574-604 թթ.): Աբասը դեռ հովվում էր Աղվանքում: Աղբյուրները լռում են երկու կաթողիկոսների համագործակցության մասին: Սակայն, հենց այդ լռությունն էլ ցույց է տալիս, որ վերջինս հավատարիմ է մնացել Հայոց Եկեղեցու գաղափարախոսությանը այնպիսի դժվար ժամանակներում, երբ Սասանյան Իրանը կտրուկ փոխել էր վերաբերմունքը հակաքաղկեդոնականների նկատմամբ,

69 Ասորական աղբյուրներ, էջ 391

70 Վրաց աղբյուրները, էջ 42:

71 La Nazzatio de rebus Armeniae, էջ 37, **Ասողիկ**, էջ 85, Վրաց աղբյուրները ..., էջ 42, Ասորական աղբյուրներ, էջ 392:

72 Տե՛ս Վրաց աղբյուրները ..., էջ 42:

73 Անդ: Ասորական աղբյուրներ, էջ 392:

74 «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, էջ 287-288. **Վ. Մ. Վարդանյան,** Հայոց եկեղեցին..., էջ 264:

իսկ Բյուզանդիան հետեւողականորեն շարունակում էր Արեւելքի երկրներում քաղկեդոնականությունը պետական մակարդակի բարձրացնելու քաղաքականությունը:

Գահ բարձրանալով՝ Մովսես Բ. Կաթողիկոսը պաշտոնապես մերժում է 571 թ. կնքված հայ-բուզանդական դավանական միությունը եւ վարում Բյուզանդիայից անկախ կրոնական քաղաքականություն: «Մովսէս,-հավաստում է Սեբեոսը,-ամենեին

ոչ լինէր ի նոսա (հույների հետ-Հ.Ս.)հուպ»[75]: Դրան հակառակ, կայսրությունը փորձում է բոլոր միջոցներով խոնարհության բերել Հայոց Եկեղեցին, ինչը նշանակում էր նույն վիճակի մեջ դնել նաեւ Աղվանից ու Վրաց եկեղեցիները: Կոստանդնուպոլսի այդօրինակ ջանքերը առավելապես դրսեւորվում են Մորիկ կայսեր օրեք (582-602), որ եռանդուն պայքար էր ծավալում հանուն քաղկեդոնականության հաղթարշավի[76]: Նրա նախաձեռնությամբ 591 թ. Կոստանդնուպոլսում գումարվում է եւս մեկ եկեղեցական ժողով՝ «ժողով Հայոց եւ Հոռովմոց՝ վասն նորին աղանդոյն Քաղկեդոնվի»[77]: Ժողովին մասնակցում էին նաեւ Մովսես Երկրորդի պատվիրակները՝ նրա գործերի հավատարմատար եւ ապագա տեղապահ Վրթանես Քերթողը՝ Քշկանորդի մականունով[78] (տեղապահ է եղել Մովսեսի մահից հետո 604-607 թթ.) ու Գրիգոր եպիսկոպոսը: Այդ մասին հաղորդում է Սամվել Անեցին. «Գիրգոր եւ Վրթանես վարդապետք Հայոց գնացին ի Յոյնս եւ ոչինչ օգտեցուցեալ զնոսա՝ դարձան նզովելով»[79]: Ահավասիկ, պատմիչի տեղեկացմամբ, հայերը հերթական անգամ ծառանում են Բյուզանդիայի դեմ եւ ժողովում բացեիբաց մերժում են քաղկեդոնականությունը եւ նզովում այն: Ունե՞ր Աղվանից Եկեղեցին իր պատվիրակները այդ ժողովում, թե ոչ, դժվար է ասել: Կարելի է սոսկ ենթադրել, որ այն լինելով Հայոց Եկեղեցու դավանական դաշնակիցը, Աբասը նույնպես պատվիրակներ է ուղարկել Կոստանդնուպոլիս, եւ նրանք, հայերի հետ միասին, նմանապես մերժել են իրենց պարտադրվող հավատքը: Այնուամենայնիվ, հույներին հաջողվում է երկփեղկել Հայոց միաբնակ եկեղեցին: Բյուզանդական Հայաստանից ժողովին մասնակցող եպիսկոպոսները, համաձայնության գալով հույների հետ, իրենց եւ կայսրությանը ենթակա գավառների հայության համար Կաթողիկոս են ընտրում Հովհաննես Բագարանցուն՝ Կոգովիտ գավառի եպիսկոպոսին. «Եւ Տէր Մովսէս էր յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դունի, եւ ի կողմն Յունաց հակառակ նմա նստոցին յաթոռ զՅովհան ոմն»,-գրում է Կաղանկատվացին[80]: Սեբեոսն էլ է գրում, որ «բաժանեցաւ յապա եւ աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս եւ միւսոյն՝ Յովհան: Մովսէս ի Դարսից կողմանէ, եւ Յովհան՝ Յունաց»[81]: Հայոց Եկեղեցու երկփեղկման մասին խոսում են նաեւ այլ հեղինակներ[82]: Հակաթոռ Կաթողիկոսի հա-

75 « Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, 1979, էջ 91 /այսուհետ՝ Սեբեոս/

76 Անդ:

77 Անանիա Ծիրակացու Մատենագրությունը, էջ 397:

78 Տե՛ս **Օրմանեան**, էջ 674

79 «Սամուէլի քահանայի Անեցւոց Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 76:

80 **Կաղանկատուացի**, էջ 273-274:

81 **Սեբեոս**, էջ 91:

82 Տե՛ս **Օրբելեան**, էջ 90, **Ասողիկ**, էջ 85, Վրաց աղբյուրները ..., էջ 42, Ասորական աղբյուրներ, էջ 392, "La Narratio de rebus Armeniae", էջ 37:

մար իբրեւ նստավայր ընտրվում է Կոտայքի Արամոնս (ներկայիս Արամուս գյուղը)[83]: Տեղի ունեցածը, սակայն, չի թուլացնում հայերի պայքարը քաղկեդոնականության դեմ, բայց եւ անհետեւանք չի անցնում: Նոր նշանակություն է ձեռք բերում Աղվանից Եկեղեցին: Սյունիքի հոգեւորականությունը, հրաժարվելով ճանաչել երկու կաթողիկոսներին էլ, հայացքն ուղղում է դեպի Աղվանք: Ժամանակի Սյունյաց հանրաճանաչ եպիսկոպոս Պետրոսը[84], յուրայիններին պատվիրում է մինչեւ Հայոց Եկեղեցու միասնականության վերականգնումը, իրենց ձեռնադրությունն ու օրհնության մեռոնը, որ մինչ այդ ստանում էին Հայաստանից, ստանան Աղվանքից: «Իսկ ի երկուանալն հայրապետութեանն,-գրում է Կաղանկատվացին,-խոտեցին տեարքն Սիւնեաց, եւ ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն. հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինւոյ Պետրոսի, որ հասեալ ի վախճան, պատուէր եդ վիճակին իւրում առնուլ ձեռնադրութիւն յԱղուանս եւ զմիւռոնն օրհնութեան մինչեւ միասցի աթոռ սրբոյն Գրիգորի»[85]: Նույնը ասում է եւ Ստեփանոս Օրբելյանը. «Եւ սակս այսպիսի վիճմանց սուրբ Պետրոս, յեւրկալ յաղմկէ անտի ի խանգարմանէ, եւ յԱղվանից առնուլ ձեռնադրութիւն եւ չէր մինչեւ խաղաղասցի խռովութիւնն, զոր արարին իսկ»[86]: Պատվիրանի համաձայն Պետրոս եպիսկոպոսի հաջորդներից Տեր Գրիգոր եւ Քրիստափոր եպիսկոպոսներն իրենց ձեռնադրություններն ստանում են Աղվանքի Կաթողիկոսի ձեռքից: Հայտնի է նաեւ նման մեկը՝ Վրթանես անվամբ, որին Սյունյաց եպիսկոպոս է կարգել Աղվանքի Կաթողիկոս Տեր Զաքարիան[87]: Այս մասին նշում է եւ Մովսես Դասխուրանցին՝ զուգահեռ մի շատ ուշագրավ հավելում անելով: «Տէր Զաքարիա...,-գրում է նա,- ձեռնադրեաց եպիսկոպոս Սիւնեաց զՎրթանէս ոմն անուն յանհաւանութեան Հայոց»[88]: Հաղորդման ընդգծված արտահայտությունը՝ նշանակում է «առանց հայերի համաձայնության». պարզվում է, որ Հայոց եւ Աղվանից հոգեւոր առաջնորդների միջեւ գործել է մի կարգ, որի համաձայն Աղվանքի հայրապետները Սյունիքին եպիսկոպոսներ օծելուց առաջ նախապես թեկնածուի շուրջ պետք է ունենային հայերի համաձայնությունը: Եւ, կարծում ենք, նման սկզբունքով էլ տեղի են ունեցել մեզ արդեն ճանաչ Տեր Գրիգորի եւ Քրիստոփորի ձեռնադրումները, իսկ ահա Տեր Զաքարիան, որ Վրթանեսին եպիսկոպոս էր ձեռնադրել առանց հայերի հետ համաձայնեցնելու, փաստորեն խախտել էր կարգը, եւ դրա համար պատմիչը անհրաժեշտ էր համարել արձանագրել այդ փաստը: Նման պարզաբանումները, վերջին հաշվով, հանգեցնում են այն իրական եզրակացությանը, որ նոր կարգավիճակ էլ ստանալով՝ Աղվանից Եկեղեցու ենթակայությունն Հայոց Եկեղեցուց չէր վերացել: Եւ, թերեւս, Վրթանեսին եպիսկոպոս ձեռնադրելու Տեր Զաքարիայի ինքնագլուխ քայլն իր գլխավորած եկեղեցին այդ ենթակայությունից դուրս բերելու եւ ինքնուրույնության ուղու վրա դնելու մի փորձ էր: Սյունիքի եպիսկոպոսների ձեռնադրումն

83 **Սեբեոս**, էջ 91: Ըստ Օրմանյանի՝ Ավանը տե՛ս Օրմանեան, էջ 671:
84 Նրա մասին տե՛ս Օրբելեան, էջ 89-91:
85 **Կաղանկատվացի,** էջ 274:
86 **Օրբելեան**, էջ 91:
87 Տե՛ս **Կաղանկատուացի**, էջ 274, **Օրբելեան,** էջ 91:
88 **Կաղանկատուացի,** էջ 344 (ընդգծ. Հ.Ս.):

Աղվանքի կաթողիկոսների ձեռամբ պահպանվում է մինչեւ Հայոց Եկեղեցու միասնականության վերականգնումը Աբրահամ Ա. Աղբաթանեցի Կաթողիկոսի օրոք (604-615 թ.): Կաղանկատվացին գրում է. «Զիւղն օծութեան ամ յամէ առնուին Սիւնիք յԱղուանից, մինչեւ բարձաւ հակառակութիւնն, եւ միապետեաց Աբրահամ զհայրապետական աթոռն»[89]: Նույնը, գրեթե բառացի, գրում է եւ Ստեփանոս Օրբելյանը[90]: Հայոց Եկեղեցու պառակտված մասերի վերամիավորվելուց հետո Մայր Աթոռի հետ միավորվում է եւ Սյունիքի եպիսկոպոսությունը, ու դրանով վերջ է դրվում նաեւ նրա նկատմամբ Աղվանից կաթողիկոսության ունեցած դերակատարությանը:

Աղվանից Եկեղեցին թեւակոխում է Է. դար այն նույն կարգավիճակով, ինչ ուներ մինչեւ նոր իրավասությամբ օժտվելը:

Այսպիսով Զ. դարում հայ-աղվանական եկեղեցական հարաբերություններն ընթանում էին քաղկեդոնականության դեմ համընդհանուր պայքարում: Այդ ողջ ժամանակաշրջանում աղվանացիները հանդես էին գալիս իբրեւ Հայ Առաքելական Եկեղեցու գաղափարական դաշնակիցներ եւ նրա օգնությամբ խափանում էին երկրում մերթ ընդ մերթ աշխուժացող քաղկեդոնականության եւ վերջինիս տարատեսակ հանդիսացող նեստորականություն արմատավորվելու ջանքերը:

89 Տե՛ս անդ, էջ 274:
90 **Օրբելեան,** էջ 91: